1897 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24 (Նոյեմբ. 5) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзагангъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 3 կոպէկ։

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ՛ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ՛ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՒԱ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՒԱ 1 ՌՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang"

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Անտրպրիզ Վ. Լ. ՖՈՐԿԱՏՏԻ

Ուրբաթ, 24 հոկտեմբերի

օպերային արտիստների ընկերութիւնը կըներկայացնէ

ՕԹԵԼԼՕ

Օպերա 4 գործ., երաժշտ. Վերդիի

Մասնակցողներ.—Օր. օր. Պապայեան, Բիչուրինա, պ. Պ. Պերեց, Վինոգրադով, Պագալենկօ, Բուլաստով, Պեցեվիչ և այլք։

Երաժշտապետ Ի. Պ. ՊԱՊԱՆԻ.

Ռէժիսեօր Ի. Ե. ՓԻՓՈՑԵՎ։

ՍԿԻԶԲԸ Է 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ

ԱԶԴ.—Վաղը, հոկտեմբերի 25-ին, ի յիշատակ պ. Ի. Չայկովսկու, երաժշտական երեկոյթ, որին մասնակցում է ամբողջ խումբը։

Կիւրակի օրը կըլինին երկու ներկայացումներ. ցերեկուանը կըլինի «Փաուստ» օպերան, էժանացրած գներով։

Հոկտեմբերի 30-ին արտիստուհի Բ. Ե. Կարամզինա-Փուկովսկայի բենեֆիսն է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի ուսուցչական ճեմարանի քառասնհինգամեակի առիթով.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Կ. Պոլսից։ Կ. Պոլսոյ պատրիարքի յաջորդը։ Կ. Պոլսի զեպքեան Զինօվևիլը։ Ռուս գաղթականները։ Խաղողի հիւանդութիւնը Երևանի նահանգում։ Բամբակի հունձը Երևանի նահանգում։ Գանձակից։ Գինու մենավաճառութիւն։ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը։ Մոնաստիրցովին ըսպանողի ձերբակալելը։ Նկարիչ Յ. Այվազովսկու հեռագիրը։ Նամակ խմբագրութեան։ Աքօրից։ Նամակ Կաղզուանից։ Նամակ Այգիհամից։ Ախալքալաքը պզտիկ է բայց չարիկ։ Հայկական խմբի ներկայացումները Բաղվում։ Նկարչական պատկերահանդէս։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԷԼԻԵՏՕՆ.—Ասի։ Բազուեցիք և Դէօթէ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՔԱՌԱՍՆՀԻՆԳԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Վաղը, ամսոյս 25-ին լրանում է Պետերբուրգի Ռուսուցչական ճեմարանի գոյութեան 25ամեակը. ինքս լինելով գոյն ճեմարանի սանը, ցանկանում եմ փոքր ինչ հանգամանօրէն խօսել այդ ուսումնական սերմնարանի մասին, որի օգուտը դաստիարակութեան գործում ակներև է։ Դաստիարակական գործունէութիւնը Ռուսաստանում կարելի է երկու շրջանի բաժանել, որոնցից առաջինը քրիստոնէութեան տարածումից հասնում է մինչև Մեծն Պետրոս, իսկ երկրորդը՝ Մեծն Պետրոսից մինչև ներկայ ժամանակս։ Առաջին շրջանը իսկ նախապետական բնաւորութիւն է արտայայտում. երկրորդը միայն ունի իւր նշանաւոր կողմերը և պատմական զարգացումը։ Առաջին շրջանի իսկ օրինակելի և խրատական կէտն այն է թէ ինչպէս ռուսաց հոգևորականութիւնը ամենաեռանդուն պատերազմ էր մղում «Հաւատի և ազգութեան» համար՝ կըրթութեան միջոցաւ, է որ մոնղոլների բռնակալութեան դէմ, է որ կաթոլիկների, մանաւանդ «յիսուսականների» անիրաւ ձգտման դէմ, որոնք ցանկանում էին բանի կերպով (մանաւանդ հարաւարեւմտեան Ռուսաստանում) պապի գերիշխանութիւնը ճանաչեցնել տալ և կաթոլիկացնել, հետևապէս—ազգը ձուլման բովը ձգել։ Բայց ռուս հոգևորականութիւնը այդ ճնշումը տմարդի համարելով, ամենամեծ տոկունութեամբ և անձնուիրութեամբ կարողացաւ յաղթանակը տանել, մանաւանդ որ իւր ամբողջ ույժը կենդրոնացրել էր իւր ժողովրդի ազգային և բարոյական գաղափարը սուրբ պահպանելու սիրոյ մէջ, պաշտպանութեան անխորտակելի վահան համարելով իւր կրօնը և ազգային բնաւորութեան առանձնայատկութիւնները։ Այդ շրջանի պատրաստ ուսուցիչները հոգևորականներն էին. չկար առանձին հաստատութիւն ուսուցչական գործունէութեան համար պատրաստելու նպատակաւ. կրօնական—ազգային ուղղութիւնը իւր հրահանգները արդէն տուել էր դաստիարակութեան համար. առանձին պատրաստութիւնների կարիքը ապագայում զգացուեցաւ, որպիսին նկատում ենք երկրորդ շրջանում։

Երբ ռուսաց կայսրութիւնը իւր ներքին ույժը ամրացրեց և արտաքին ու ներքին թշնամեաց դէմ յաղթանակ տարաւ, առաջնորդ ունենալով այնպիսի լուսամիտ կայսր, որպիսին էր Պետրոս Մեծն, լուսաւորութեան ընթացքը կանոնաւոր չաւղի վրայ սկսեցաւ դրուել, շնորհիւ արևմտեան եւրոպական լեզուաթեանց հետ յարաբերութիւն ունենալուն։ Պետրոս Մեծից սկսած, զանազան ժամանակներում, զանազան ուսումնական հաստատութիւններ բացուեցան—օրինակ՝ ծովային և ճարտարապետական ուսումնարաններ, համարական և պաշտպանական դպրոցներ, գիտութեանց և ճարտարապետութեանց ճեմարանները, համալսարանները, զանազան մասնագիտական միջնակարգ և բարձրագոյն դպրոցները և բաւականաչափ էլ տարրական ուսումնարաններ, որոնք ծառայելով ժողովրդի դաստիարակութեան տարածմանը, նպաստում էին նրա բարօութեան լաւանալուն, որպիսի ուղղութիւն արտայայտեց և հովանաւորեց Եկատերինէ Բ. Կայսրուհին իւր նշանաւոր հրովարտակով (նակազով) պարտաւորացնելով «Հասարակական հոգատարութեան Առենին» ամենայն միջոց գործ դնելու առաւելապէս հասարակական կրթութեան սերմնարանների վրայ։ Գործը աւելի կանոնաւոր հիմքի վրայ դրուելու պատճառով՝ հաջակաւոր կայսրուհին հրամայեց իբրև գեկավար սերբ Յանկովիչ դէ-Միրիեվոյին, որ աւստրիացի մանկավարժ Ֆէլբիգէրի ուսուցման ծրագրի հետ քաջ ծանօթ էր։ Յանկովիչը ճիշտ որ արդարացրեց կայսրուհու յոյսերը և խորհուրդ տուեց տարրին գաւառկագի ուսումնարանների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակաւ բանալ Ռուսաստանում առաջին Ռուսուցչական սեմինարը, որն իւր գոյութեան հարիւրամեակը արդէն սրանից մի քանի տարի առաջ տօնեց։ Ամենամեծ կերպաբանափոխութեան և զարգացման հասաւ դպրոցական գործը Աղէքսանդր Ա. Կայսեր, դպրոցների այդ Մեծ պաշտպանի օրով և հովանաւորութեամբ, մանաւանդ որ առ հետևելով Եկատերինէ Բ.-ի և Աղէքսանդր Ա.-ի լուսամիտ, հանրամարդկային և համանական ուղղութեան, խրախուսեց բազմացնել դպրոցների թիւը առաւելապէս հասարակութեան համար, որպէս զի վերջինս միջոց ունենայ դաստիարակուելու։

Գավելի նպատակի ազդեցութեան տակ բացուեցան և քաղաքային դպրոցները, որոնց մէջ դասաւանդումն կանոնաւոր լինելու համար, այն էլ ժամանակակից մանկավարժութեան պահանջների համեմատ, բացուեցան ուսուցիչներ պատրաստող «Ուսուցչական ճեմարաններ», որոնցից մէկն է Պետերբուրգինը, բացուած 1872 թ.։

Պետերբուրգի ուսուցչական ճեմարանը մասնագիտական հաստատութիւն է, որ ամենաարդիւնաւէտն է ճանաչուած իւր նմանների մէջ. դրա նախանձելի դրութիւնը հաստատուեցաւ այն ժամանակից, երբ ճեմարանի վարչութեան գլուխ ընկաւ նշանաւոր մանկավարժ Դորլյոս Կ. Սէնտ-Իլէրի ձեռքը 1876 թ. սկսած, իւր աջակից ունենալով նշանաւոր մանկավարժ դասատուներ, որոնք են ա) Գուրևիչ, յայտնի պատմաբան, դասախօս համալսարանի և խմբագիր «Русская школа» պատուական մանկավարժական ամսագրի, բ) Վ. Լատիշե մաթեմաթիկոս, այժմս դիրեկտոր Պետերբուրգի նահանգի դպրոցաց և խմբագիր «Русскій начальный учитель» համակրելի մանկավարժական ամսագրի. գ) յայտնի հիգիենիստ Վիրէնիուս. դ) աշխարհագէտ Մէյէր. ե) բնախոս փայլուչովի Գերման; զ) նշանաւոր մաթեմաթիկոս, այժմ հանգուցեալ Ոլխովոյ. է) պրոֆէսոր երաժշտութեան Ռուբէց և Կ. Դալլէր և այլք։ Ճեմարանը որ այժմ իւր գոյութեան 25ամեակն է տօնում, ամենամեծ համակրանաց է արժանի, առաւելեան մտաւորապէս չորս հարիւր հազի աւարտած մանկավարժներ է պատրաստել, որոնք հասած են կայսրութեան ամեն ծայրերը՝ ամենահեռու Սիբիրային Կոմ քաղաքից սկսած մինչև Պաղէստին, իսկ Կամչատկայից էլ մինչև Վարշավ։ Ամենամեծ տոկոսը այժմ զբաղեցնում է Պետերբուրգի նահանգի դպրոցաց մէջ, որոնք ամենայառաջադէմ և կանոնաւոր դպրոցներ են, համեմատելով միւս նահանգների դպրոցաց հետ, շնորհիւ եռանդուն և գուռ մանկավարժական գործունէութեան Պետերբուրգի ուսուցչական ճեմարանի նախկին սաների։

Ճեմարանը այժմ եռամեայ կուրս ունի, ուր աւանդվում են առաւելապէս զուտ մանկավարժական գիտութիւններ, իրանց բոլոր ճիւղերով հանդերձ. ընդունվում են մեծ մասամբ միջնակարգ դպրոցներից աւարտածները, այն ինչ միւս ուսուցչական ճեմարանների ուսանողների թիւը կազմում են աւելի քաղաքային դպրոցների աւարտածները. մօտը կից ունի քաղաքային դպրոց, ուր մշտապէս փորձում են դասաւանդման մէջ ապագայ ուսուցչացուները—սաները Ինստիտուտի։ Ճեմարանն ունի մի պատուական թանգարան, որ օրինակելի է համարվում ամբողջ Ռուսաստանում։ Ինստիտուտը իւր ուսուցչական խմբով եղել է իբրև օրինակառու միւս ուսուցչական ճեմարանների համար, որոնք մանկավարժական գործունէութեան այլ և այլ ձևերը այստեղից են իւրացրել։ Ճեմարանը այնքան գեղեցիկ յառաջադիմութիւն է ցոյց տուել, որ նրա աւարտած աններին իրաւունք է տրուել դասախօսել միջնակարգ դպրոցների—առաւելապէս հոգևոր և ուսուցչական սեմինարների բարձր դասարաններում, ուր աւանդվում են փիլիսոփայական գիտութիւններ։ Այժմ էլ, աչքի անցկացնելով ռուսաց մանկավարժական գրականութիւնը, նկատում ենք, որ ամենամեծ տոկոսը գործողների՝ Պետերբուրգի ճեմարանի (ուսուցչական) ընթացաւարտներն են կազմում. Բացի մանկավարժական գործունէութիւնից Ինստիտուտի աւարտածներից ոմանք հասել են համալսարանի գեղեցիկ ամբիոնի, ոմանք այժմ քաղաքագլուխներ, հոգեբուականներ, տեսուչներ, բնախոսներ, գիւղատնտեսներ և ուսանողներ են համալսարանների և այլն։

Պետերբուրգի ուսուցչական ճեմարանը հայերի համար ևս ունի մեծ նշանակութիւն, որովհետև երջանկայիշատակ հանգուցեալ նշանաւոր բարերար Միքրտիչ Մանտաշեանցը գերագնիւ պ. Կարապետ Եզեանցի խորհրդով այստեղ պատրաստուել տուեց իւր հաշուով մի խումբ ուսուցիչների, որոնցից մի քանիսը արժանաւոր մշակ են հանդիսացել իրանց սիրած գործունէութեան ասպարիզում։

Վերջացնելով յօդուածս, ես սրտէս նրա նախկին սանս, ի սրտէ ցանկանում եմ անմոռանալի Ինստիտուտին և յապագայումն յարատևութիւն ու կատարեալ յառաջադիմութիւն։

Ներքնեցի Գրիգորիս քահ. Երզնկեանց.

24 ն հոկտ. 1897 թ.

Թիֆլիս.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍԻՑ հաղորդում են, որ հայկական նահանգների կառավարիչ բնակիչներին օգնելու համար կառավարութիւնը նշանակել է մահմեդականներից — քրիստոնեաներից բաղկացած յանձնաժողով, որ շուտով պիտի գնայ Փոքր Ասիա։ Հայոց պատրիարքին մօտիկ շրջաններում այդ յանձնաժողովին ոչ մի նշանակութիւն չեն տալիս. նախ և առաջ զգոյշ են նրանք, որ յանձնաժողովի ծրագրում աւելրած չինուած ոչ վերաբերմամբ յիշուած են միայն մահմեդականների և քրիստոնեաների աւերած գիւղերը. Այս առթիւ օրէնքով պատրիարքը ասվէնում յիշատակելի ասած է, որ ասում է. «Մեր կարիքը միայն դպրոցները չեն, ներկայումս մեզ աւելի կարեւոր են եկեղեցիք և պաշտամունքարանները». Այսպէս յիշատակագիրը սուլթանի ուշադրութիւնը հրաւիրում է նրա վրայ, որ յանձնաժողովին հարկ կ'լինի մի քանի ամիս ճանապարհորդելու, բացի սրանից ձեռան առաջին է, հաւանական է, որ յանձնաժողովը բնաւ տեղից էլ չշարժի, որովհետև հայկական նահանգների մեծ մասը, գլխաւորապէս Կարինը, ձիւնը պատէ, անանցանելի են դառ-

ՖԵԼԻԵՏՕՆ

ԱՍԻ*)

Պարսկական կեանքից

VIII

—Եթէ չեմ սխալվում, ասաց Թահմաս խանը յանկարծ Մէհտի Ղուլի խանին դառնալով, երբ երբեքն էլ սենեակից դուրս էին եկել—եթէ չեմ սխալվում, այդ երգը ձեր հօր մասին պիտի լինի... Նա այդպէս մեռաւ... ՞, այո, ձեր հայրը թէև մեզ թշնամի էր, բայց մարդ էր...

Ցեռայ առանց նրա երեսին նայելու, բարևեց ու կամեցաւ բաժանուել իւր ընկերներից։

—Բայց սպասիր, բռնեց նրա թևը տանուտէրը...—ես էլ նոյնն եմ մտածել միշտ և արժէր որ այդ տեղի կառավարիչը լինէր նրա որդին։

—Այսինքն, ասաց Թահմաս խանը կանգ առնելով—դուք ուզում էք ասել որ այդ ցեղի անկախ իշխանի յաջորդ պիտի նշանակել հօր կառավարիչ և դա էլ պիտի լինի հնազանդութիւն յայտնած ու գերողի կամքը կատարող որդին... համաձայն չեմ։ Հայ մի ժողովրդի համար առելի բան, քան այն որ կառավարիչը իբր ապստամբ տարուած լինելով, վերադառնում է իւր սարերը կատարելու համար ճնշողի կամքը... դուք կարծեմ հասկանում էք ինձ։ Ես խօսում եմ այն, ինչ որ մտածում եմ։ Մէհտի-Ղուլի խանը այլ ևս սիրելի չէ կարող լինել այն ժողովրդին, որի ազատ պետն էր հայրը։

Երիտասարդ բախտիարին կարմրեց, աչքերը բարկութեան մի կայծ արձակեցին և նա ուզեց խօսել։

—Թողէք դեռ ես վերջացնեմ. չթողեց նրան Թահմաս խանը—ես այդ նոյն ժողովրդեան մի ուրիշ ճիւղի զաւակն եմ և ճանաչում եմ բախտիարցու ոգին։ Բախտիարին այնքան ատում է մի ժամանակ ազատ իշխող և յետոյ գերողին հլուութիւն յայտնած կառավարչին, որքան չէ ատում պարսիկ կուսակալի։ Նա համաձայն է պարսիկ կառավարիչ ունենալ, քան իւր ազգակից ուրացող, ազատութիւնից սարկութեան իջած ազային։

—Բայց գիտէք ինչ, մէջ մտաւ տանուտէրը—դուք շատ խիստ էք խօսում, Թահմաս խան, բաւական է։

—Ո՛չ, գոչեց Մէհտի-Ղուլի խանը—խօսեցէք, սարդար, ձեր խօսքերը կծու են, բայց ճիշտ են։ Ես այժմ այլ ևս չեմ կարող հօրս նման լինել. ուշ է. մնում է ինձ հնազանդել։

—Եւ ամենից խելօք բանը դա է, ասաց տանուտէրը—շահը սպառնած է եղել դէպի ձեզ և ահա այժմ էլ ուզում է նշանակել կառավարիչ. երեք փաղը կ'իմանաք այդ մասին։

Մէհտի-Ղուլի խանը և ոչ իսկ շարժում գործեց. լուրը նրա վրայ ազդեցութիւն չարաւ, որովհետև վաղուց լսել էր այդ մասին։

—Ես կըմերժեմ, ասաց նա հանդարտութեամբ։

—Կըմերժէք, կանգ առաւ տանուտէրը—Շահի հրամանը և շնորհը կըմերժէք։

—Այո, ասաց վճռականօրէն երիտասարդը—կըմերժեմ. ես հիւանդ եմ, իսկ մեր ցեղի կառավարիչը հիւանդ մարդու գործ չէ։

—Իզուր էք այդպէս կարծում, ասաց Թահմաս խանը—ձեր ցեղը այժմ զրկէ մնացել է. մեռնող մարդուն հիւանդն էլ կարող է կառավարել։

—Դու արդէն չափը անցնում ես, ասաց նրան տանուտէրը—կոպիտ ես, ներիր առել ինչու՞ պիտի մնած լինի ցեղը. մի ժողովուրդ այդպէս շուտով մեռնել չէ կարող։

—Թահմաս խանը պատրաստվում էր մի բան պատասխանելու, երբ յանկարծ մի իրարանցում սկսեց. ծառաները փաքելով անցան և լսուեցին մի քանի ձայներ.

—Ջահը գալիս է!...

Տանուտէրը իսկոյն թողեց Թահմաս և Մէհտի Ղուլի խաններին և դուրս թռաւ դէպի փողոցի դուռը։ Այնտեղ էր իջնում արդէն ծերունի հայրը, ընկերակցութեամբ բոլոր մեծամեծների և ազնուականների։ Այդպէս թափօր կազմած. ամենքը փողոց եկան և գնան փորայ կախուած լապտերների լուսաւորութեան տակ սպասեցին Ջահին։ Մի ձիաւոր էր լուրը բերել. բայց ինքնակալը դեռ չէր երևում և ոչ էլ նրան շրջապատող լեռնային հրացանակիրների զանգի ծայրը։

Հաջի Միրզա Սէյիդ Ալին իւր որդու և միւսների հետ երկու կարգ շարուեցին և մի քանի ծառաներ իսկոյն սկսեցին զորգ տարածել փողոցից մինչև ներսը. ուրիշները ջահեր բերին. լռութիւնը տիրեց թէ ներսում և թէ դըրսում. քահանաները ու կրօնաւորները ներսից ու դրսից երկու կարգ շարուած՝ մնացին ազնուականների ետևում։

Ներսում փոխի տակ մնացին Թահմաս խան սարդարը և Մէհտի-Ղուլի խանը. Թահմաս խանն էլ կամեցել էր միւսների պէս հեռանալ, բայց երիտասարդը բռնել էր նրան։

—Մի րոպէ, սարդար, ասում էր նա, դուք շատ վիրաւորեցիք ինձ և անշուշտ ես փչացել եմ բոլորովին, որ սիրտ չունեցայ դաշոյնս ձեր սիրտը խրելու... դուք իրաւունք ունիք ոտքէս և այդ գլխակ գաւթիւնը պահեց իմ ձեռքը։ Ասացիք որ ժողովուրդը աւելի լաւ է համարում մի պարսիկ կառավարիչ քան հպատակութիւն յայտնած և ինքնակալի կամքը միայն կատարող նախկին ցեղապետը... բայց մեծէ այդ ցեղապետը չէ կարող հնազանդութիւն ցոյց տալ ձեւացնել և ապա, երբ տեղ է հասել, հանել իւր և իւր ազգի բոլոր ատելութեան վրէժը... ես ձեզ ասում եմ այս առանց փախչելու. դուք ազնուական էք և լրտես չէք լինի։

Թահմաս խան ծիծաղեց։

—Մի խրատ ձեզ, ասաց նա հանդարտութեամբ—նախ այն, որ լրտեսները առհասարակ ազնուականների մէջ են լինում մեծ մասամբ... դուք յետոյ, ուզում էք ասել որ խորամանկութեամբ այստեղ աս երևոյ հնազանդութիւն կեղծել և ապա, տեղ հասնելուն պէս ժողովրդին ասքի կըհանէք... Այդ շատ լաւ, եթէ միայն երեք բան չմոռանայիք. երեք բան, որոնք Ջահը շատ լաւ գիտէ և դրա համար է որ փառահանում է ձեզ կառավարիչ ուղարկել։ Դուք մոռանում էք որ ժողովուրդը կէս է եղել և լիովին ջլատուած է. մոռանում էք որ շրջապատող ցեղապետները բոլորը հնազանդ են Ջահին և նրանք միայն կըգան ձեր բոլոր ջանքերը խեղդելու և դա ձեր մեղքն է, և երրորդ՝ մոռանում էք ժողովուրդը, որ այլ ես ատում է ձեզ, որովհետև երբ պէտք ունէր ձեզ՝ չգնացիք և մեղկացաք...

—Իսկ եթէ անհնար էր գնալ.

—Պէտք էր ուրեմն մեռնել։

Մէհտի-Ղուլի խանը գունատ՝ ուզեց խօսել չկարողացաւ։

—Այո, շարունակեց Թահմաս խանը—ես իմ մարդ, իմ բախտիարցի՝ այդպէս եմ մտածում... բայց ինչու էք ինձ խօսեցնում. ահա Ջահը գալիս է, նա կըտայ ձեզ իշխանութեան տիտղոս... դը նացէք. իսկ եթէ փոխ... կուզէք, դուք կունենաք և հանգստութիւն և հարստութիւն և կանայք. . . մի խօսքով ամեն հաճոյք. և եթէ ժողովուրդն կարող չէ սիրել իշխել, բռնութեամբ կարող էք. . . Մտէք բարև, Ջահը գալիս է. . .

Առաջ և առանց այլևս ժամանակ տալու որ երիտասարդը ուշքի գար, սարդարութեամբ դուրս գնաց դէպի դուռը։

Դրսից եկած աղմուկն այդ միջոցին աւելանում էր՝ Ջահի թափօրը երևացել էր. նրա հրացանակիրները հեռուից, հեծած արծաթեայ ու ոսկեայ զարդերով ձիերի վրայ, հրացանները ծնկան վրայ դրած՝ արշաւում էին, իսկ առջեւից փաղող կարմիր հագած փառաշները երկար ճիպոտներ ձեռքերին գնում էին և «բրօ, բրօ» *) ձայնում։

Խոր լռութիւն տիրեց. միայն լսվում էին ձիերի ոտնաձայներ և ինքնակալի փակ կառքի դղրդիւնը։

Իսկոյն Հաջի Միրզա Սէյիդ Ալին և ազնուականները երկու շարք կանգնած՝ պատկառանօք շոկուեցին, փերարկուների առաջին քղանցքները իրարու վրայ բերելով, և երբ կառքը մօտեցել էր, բոլոր գլուխները խոնարհուեցան մինչև մէջքը։ Հաջի Սէյիդ Ալին փաղեց կառքի դուռը բաց արաւ և նոյնպէս մինչև կէս մէջքը, ձեռքերով երկար փերարկուի փէշերը ծալած առաջ՝ խոնարհուեց։

Ինքնակալը բարևեց ծերունուն, «բաբա» (հայրիկ) անուանելով նրան, յետոյ դարձաւ Սադրազամին, որ շտապել էր իջնել և նրա ետևում կանգնել—ասաց խռովա ձայնով.

—Կարոն առողջ է, շէ՛, առողջ է երևում...

—Այո, ձերդ մեծութիւն, խոնարհելով փնթեց.

—Շնորհիւ Ձերդ բարձր մեծութեան, ասաց Հաջի Սէյիդ Ալին—ձեր ծառան ազատ է և ձեզ երկար օրեր բարեմաղթող։

—Շնորհակալ եմ, շնորհակալ...

Ու սկսեց առաջ գնալ, ընթելով աջ ու ձախ խոնարհող գլուխները։ Ամբողջ շարքը զգան մօտից սկսեց շարժուել. ջահակիրները ետ ետ գնալով լոյս տուին և ինքնակալը զորգի վրայով ներս մտաւ.

Վրանի տակ հանդիսով նստելուց և.

*) Տես «Արձագանք» № 121

*) «Ճանփ, ճանփ»—այդպէս են ձայնում, ճանապարհից անցորդներին մի կողմն հրաւիրելու համար։

նում. Ուստի և ս. պատրիարքը խնդրում է սուլթանին այլ՝ ա. նրի իրական միջոցներ ձեռք առնուլ։

* * *

Ռուսական գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից, թէ հայոց պատրիարքը մի յայտագիր է պատրաստում սուլթանի անունով. այդ յայտագրի մէջ նկարագրելով ժողովրդի ծանր դրութիւնը, պատրիարքը պահանջում է անմիջական օգնութիւն։

* * *

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են որ Նոյեմբերի 17-ին Պետերբուրգ ժամանած Ս. Պօլսոյ դեսպան Զինովիեվը նոյեմբերի վերջին ուղեւորվում է Կ. Պոլիս իւր պաշտօնը ստանձնելու։

* * *

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են որ երկրագործական և պետական կալուածների նախարարութիւնն այժմ զբաղուած է Կովկասում եղած ազատ հողերի քանակութիւնը հաշուելով. Այդ նպատակով նախարարութիւնն արդէն հարցումներ է արել տեղական վարչութիւններին և երբ որոշուի ազատ հողերի քանակութիւնը՝ Ռուսիայի ներքին գաւառներից կսկսեն ռուս գաղթականներ փոխադրել Կովկաս։

* * *

Երևանեան նահանգում, նոյնպէս և Կաղզուանի շրջանում, ամէն տեղ սկսել է զարգանալ խաղողի որթերին վնասող Cladosporium կոչուած հիւանդութիւնը (սունկ), որ բացառապէս լինում է տերևների և պտղի վրայ։ Ինչպէս հաղորդում է տեղական Ֆիլօքսերային էքսպէրտը, Երևանի նահանգի Արաալու, Կուլիթամլի, Բզօվանդ գիւղերում, նոյնպէս և Կաղզուանի շրջանի մի քանի գիւղերում նկատվում է «անտրակնօզ» հիւանդութիւնը։ Երևանում, քաղաքի մէջ շատ այգիներում, հունձից առաջ խաղողի շատ ողկոյզներն սկսեցին թառամել և փտել, որով փչացաւ բոլոր հունձի երրորդ մասը։ Դարալագեազի մի քանի գիւղերում խաղողի հունձը ոչնչացրել էր կարկուտը դեռ գարնան ժամանակ և որթերն այնքան են վնասուած, որ միւս տարուան հունձը եւ քիչ կլինի։ Կաղզուանի շրջանում տեղ տեղ պատահում են օիդիում և էրինօզ հիւանդութիւնները։ Խաղողի հունձն սկսուել է հոկտեմբերի 15—20, սովորական ժամանակից տասն օրով առաջ, և ընդհանրապէս հունձը կարելի է միջակ համարել։ Խալվարը (30 փութ) տեղում վաճառվում է 8—9 ռուբլի, իսկ Երևան բերելով 11—13 ռուբ։ Երևանում խալվարն արժէ 20 ռուբլի, բայց Դամա կոչուած թաղի խաղողը, որ աճում է կրային հողի վրայ, արժէ 24 ռուբլի։ Սուրմալուի շրջան ծախվում է 10—13 ռուբլի կարասը (17 վեդրօ)։

* * *

Բամբակի հունձը, ինչպէս հաղորդում է «Կովկասի գիւղատնտեսութեան» թերթը, Երևանի նահանգում այս տարի միջակ է, իսկ Նախիջևանի գաւառում փառ։ Բրինձը և քնջութը առատ են։ Ցորենի խալվարն այժմ արժէ 20—25 ռուբլի, իսկ գարին 18—20 ռուբլի։ Թէ Երևանեան նահանգում և թէ Կաղզուանի շրջանում հացի հունձն անյաջող են, որովհետև ցանքերին շատ վնասել են մկները և կարկուտը։ Կարկուտը մեծ վնաս է տուել նաև պտղատու ծառերին և խաղողի այգիներին։

* * *

ՑԱՆՁԱԿԻՑ գրում են «Նով. Օբոզ.»-ին թէ հոկտեմբերի 19-ին նահանգապետ գեներալ Կիրիևի առաջարկութեամբ տեղական մահմեդական հասարակութիւնը ժողովուել էր Ջահ-Աբասի մզկիթը, ուր նահանգապետը յայտարարեց թէ ինքը մտադիր է Բաղմանլար թաղում դպրոց բանալ և խնդրում է մահմեդական հասարակութեան օգնել իրեն։ Հասարակութիւնը մեծ ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և մի քանիսը նոյն իսկ մզկիթում դրամական նուէրներ տուին իրենց կարողութեան չափի համեմատ։

* * *

Վերջնականապէս որոշուած է հիւսիսային Կովկասում և յատկապէս Դոնի, Ստավրոպոլի և Չերնոմորիայի նահանգներում 1900 թուի յուլիսի 1-ին գինու մենավաճառութիւն մտցնել և այս նպատակով առաջիկայ տարուայ յունուարից կսկսուի այդ տեղերում գինու պետական պահեստների կառուցումը.

* * *

Զարմանալի է, որ Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութեան օրգան «Մշակը», որ սովորութիւն ունի ս. էջմիածնի ճեմարանի մասին անգամ «բիւլէտէններ» տալ՝ արդարացնելով «գեղ կրնոտես, գաւառ կրհաչես» հայ ժողովրդական առածը՝ մինչև այսօր ոչինչ չէ ասում, թէ ինչպէս Ներս. դպրոցի հոգաբարձութիւնը այս տարի մօտ ութը հոգի նոր ուսուցիչներ կամ վերակացուներ է հրաւիրել... Հոգաբարձութեան այդ հոգսը երևի կապ ունի եկող 1898-ի մայիս ամսին, երբ լրանում է քառամեայ լիազօրութիւնը այդ անշէջ հոգաբարձութեան, և երբ ընտրութիւններին հարկ կլինի, որ նոր «ռէկրուտները» աշխատեն «Մշակի» ջոկած կանդիդատներին անցկացնել տան

* * *

Երևանի նահանգապետը զեկուցանում է Կովկասեան պ. կառավարչապետին թէ Երևանեան գաւառի պրիստաւ պ. Դատուշէքկլինսկին, որ ուղարկուած էր Թուրքիա, Բայազէթ, Մօնաստիրցեվի սպանող աւազակներին փնտրելու նպատակով, տեղական միւթեսարիֆի աջակցութեամբ ձերբակալել և բանտարկել է երեք հոգի որոնք մասնակից են եղել Ռուսիայից Թիւրքիա անասուններ քշելուն և Մօնաստիրցեվ պրիստավի սպանութեանը։ Գտնուած են Մօնաստիրցեվի ժամացոյցը, քսակը և բէզակլեցիների գողացուած անասուններից 10 գլուխ։

* *

Մեր հաշակաւոր նկարիչ Ե. Այվազովսկին կարդալով «Արձագանք»-ում իւր յոբելեանին նուիրուած առաջնորդողը, հեռագրով իւր սրտագին շնորհակալութիւնն է յայտնել նրա հեղինակ պ. Ցովհաննէս Լալայեանցին։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Հայ թերթի մը մէջ «Վառօդ» ծածկանունով Սիլիստրէէն գրուած նամակ մը կարդացինք, որով նամակագիրը սըրտայօղ ամբաստանութիւններ կընէ տեղիս նախորդ դաստատուին վրայ, իբր թէ այս վերջինը մօտ 660 ֆրանկ չորթած ըլլայ «Հայ երիտասարդների միութեան» ընթերցարանի հասոյթէն եւ գիրքերը կողոպտած։

Ներկայիս պաշտօնապէս կուգանք յայտարարել, որ վերոյիշեալ անձնաւէր և մեր միութեան հիմնադիր դաստատուին մէկ սանտիմ կորզել չփնտռելէ զատ՝ ամեն զոհողութիւն ըրած է, և տեղիս հայ երիտասարդութեան բարոյական և մտաւորական զարգացմանն դարկ ու փայլ տալ մտածած է։

Մօտիկ անցեալի մէջ տեղս կերուած սառակ մը եղած է, այդ ալ ազգ. ընկերութեան մը 60 ֆրանսական ոսկին է, զոր իւրացուցած է Եկարի բնտանիքէն Ցակոբ անուն մէկը։

Կրյուսանք, որ յանուն անկողմնակալութեան, պիտի հաճիք անկիւն մը շնորհել Ձեր թերթին մէջ բուժելու համար գայթակղած մտքերը և փրկելու համար մեր նախորդ դաստատուին և ընկերութեան վարկը և պատիւ զոր ցած անձեր մրել կըճգնին անխղճօրէն։

Ի դիմաց տնօրէն ժողովի «Հայ երիտասարդների միութեան Սիլիստրայի»։

Ատենապետ Ց. Սիմոնեան — Ատենադպիր Ս. Մ. Սահփանեան

10/22 հոկտեմբերի 1897 թ. Սիլիստրէ։

* * *

ԱՔՈՐԻՑ (Լօռի) մեզ գրում են.

«Վերջին երկրաշարժը բաւականին զօրեղ հարուածներ ունեցաւ. ձորերը շատ ահագին քարեր թափուեցին միապաղաղ քարափներից։ Բաղդաւորութիւնը այն էր, որ քարերի թափելը այն ժամանակ եղաւ, երբ երկաթուղու գծի վրայ բանող մշակները իրանց օրական աշխատանքները վերջացրել էին. եթէ գծի վրայ լինէին, վտանգի կ'ենթարկուէին։ Շատ տների պատեր փուլ են եկել. մեր եկեղեցին էլ երկու կէս ճղքուած է ասացել, այնպէս որ այնտեղ անհնարին է ժամերգութիւն անել. ուստի հրաւիրում ենք Լօռուայ գործակալ հօր ուշադրութիւնը, որ մեր հասարակութեան համայն եկեղեցին նորոգելու, որպէսզի վտանգը հեռանայ։ Երկրաշարժի ժամանակ մարդոց ոչ մի ժողովրդութիւն չի պատահել. Վնաս չի հասել և մեր Հաղբատայ և Սանահնայ հաշակաւոր հայ թագաւորաշէն վանքերին։

* *

ԿԱՂԶՈՒԱՆ. 17 հոկտ. (Թղթակցութիւն «Արձագանքի»)

Մեզանում զգալի կերպով սկսուել է հացի թանգութիւն և սրան զուգրնթացաբար և փայտի թանգութիւնը Փայտի սաժէնը այժմ, դեռ ցուրտը չսկսուած, հասել է 40 ռուբ. և այն էլ դժուարութեամբ է ճարվում, ինչ կլինի ձմեռը, որ տեղս դեկտեմբերից տեւում է մինչև ապրիլի վերջերը։

Գաղթականութիւնը շարունակվում է, ամեն շաբաթ տասով, քսանով գալիս են սահմանագլխից, գլխաւորապէս Աբձէշի գաւառից։ Այս տարուայ թանգութեան ժամանակ, երբ գիւղացին ինքն էլ տարակուսել է իւր գլխոն—ինչ պիտի լինի խեղճ գաղթականների դրութիւնը—Աստուած գիտէ։

Օգոստոս ամսին տեղս եկել էր Կարսայ փոխանորդ Եղիշէ վարդապետ Մուրադեանը ժողովարարութիւն անելու Կաղզուանում բացուելիք «նահանգական գիւղատնտեսական-արհեստագիտական հոգևոր դպրոցին, 900 աշակերտով։ Զրուցանելով սրանով, հայր սուրբը խոստացաւ, որ անպայման սեպտեմբերին կբացուի Կաղզուանի փակուած հոգևոր ծխական ուսումնարանը։ Ժողովուրդն ուրախացաւ, սկսեցին շտապ նորոգել դպրոցական տունը։ Հոկտեմբերն էլ անցաւ, իսկ հայր-սուրբից ոչ մի տեղեկութիւն չկայ դպրոցի բացուելու մասին, ինչպէս խոստացել էր ինքը։ Ոչինչ չէ լսվում նոյնպէս Կարսայ հաշակաւոր «Մուրադեան» ուսումնարանի մասին, որի համար ահա 2 տարի է ժողովարարութիւն է անում հայր Մուրադեանը—Ասում են, որ կբացուի. . . Блаженъ кто вѣруетъ.

Կաղզուանից մեկնելիս հայր Մուրադեանը առանց ժողովրդի և բարձր հոգևոր իշխանութեան թոյլտուութեան իւր հետ տարաւ եկեղեցապատական 700 ռ., պալով նախկին երեցփոխանին ստորագրութիւն, թէ ստացել է 700 ռ. Կարսայ խնայողական փոխառութեան գանձարանը յանձնելու։ Զարմանալի է, թէ ինչու է տարել հայր-սուրբը այդ փողերը, քանի որ Կաղզուանում երկու խնայողական գանձարաններ կան, ուր կարող էր պատուիրել երեցփոխանին յանձնելու, և երկրորդ եթէ տարել է Կարսայ գանձարանին յանձնելու, ինչու ահա 3 ամիս է չէ բարեհաճում ուղարկել ըստացականը։ Չար լեզուները ասում են, որ այդ գումարը հայր-սուրբը ծախսել է «Մուրադեան» ուսումնարանի շինութեան վրայ և պէտք է ասել, որ իրաւունք ունին ասելու, քանի որ երեք ամիս է ոչ մի տեղեկութիւն չունին երեցփոխը, թէ այդ 700 ռուբ. ուր է և ում մօտ։ Ազատամիտ վարդապետն, որ աջ ու ձախ անտեղեայ է կարդում իւր նախորդների վրայ, իրան չհամակրողների վրայ—կարծում ենք հարկաւոր էր առելի խիստ և ճշտութեամբ վերաբերուել դէպի եկեղեցու սեպհականութիւնը և աւելորդ չէր լինի նախ քան փողեր տանելը ժողովականների համաձայնութիւնը ստանալ։

Մեր գաւառապետը, ամենից յարգուած գնդապետ Մ. Ն. Դրեակինը, տեղափոխուեց Կարսայ գաւառը։ Սա շատ մեծ կորուստ է մեր գաւառի համար։ Չորս տարուայ կառավարութեան միջոցին գաւառապետը սիրելի էր դարձել ամենքին իւր յատկութեանց պատճառաւ, սա անպայման ազնիւ մարդ էր, խստապահանջ, սակայն ճշմարտասէր, մատչելի էր ամենքին, թէ հարուստին և թէ աղքատին։

Ցարգելի Մ. Ն. չգիտէր ազգերի մէջ խտրութիւն դնել. հայ, թուրք, քիւրդ, ռուս, ամենքը միատեսակ հաւասար վայելում էին նրա հաւատարմութիւնը, մինչդեռ նրանից առաջ մենք տեսնում էինք հակառակը, տեղի ունէր անխղճութիւն դէպի մի ազգութիւն, կոյր ատելութիւն, և առանձին սէր և համակրանք դէպի միւս ազգութիւն։ Եւ ահա շնորհիւ յիշեալ յատկութեանց Մ. Ն. Դրեակինի գաւառապետութեան ժամանակ գաւառը կատարեալ խաղաղութիւն էր վայելում, մինչդեռ առաջ մեր Կաղզուանի գաւառը սպանութեանց և աւարի կողմից առաջնակարգ տեղերից մէկն էր բռնում։ Եւ հասարակութիւնը գնահատում է, պ. Դրեակինի աշխատանքը և խորին ցաւօք բաժանուեց նրանից։ Ամսոյս 10 ին հասարակութիւնը մի փառաւոր հրաժեշտի հացկերոյթ տուեց ի պատիւ հեռացող գաւառապետի։ Ճաշի ժամանակ, հասարակութեան խընդրանօք, գաւառական բժ. Գ. Կաճկաճեանը արտայայտեց ժողովրդի զգացմունքը, ցաւ յայտնեց, որ ժողովուրդը զրկվում է ազնիւ, ճշմարտասէր կառավարչից, որ խտրութիւն չդնելով ազգութեանց մէջ և միատեսակ վերաբերուելով ամենքին՝ վերջ դրեց մինչև իւր նշանակուիլը տեղի ունեցող աւազակութիւններին և կողոպտուտներին։

Կրյուսանք, որ յարգելի պ. Դրեակինին փոխարինողը կըհետևի նրա օրինակելի օրինակին։

X.

* *

ԱՑԳՈՒՇԱՏ (Լօռի) 18 հոկտ. (Թղթակցութիւն «Արձագանքի»)

Այգեհատ գիւղում, որի բնակիչները մեծ մասամբ ազնուական Ճահվերդեաններն են, թւով մօտաւորապէս 50 տուն, անցեալ ամսի վերջերին հետևեալ ցաւալի դէպքն պատահեց։ Առաւօտեան ժամի 5'ն Այգեհատի բնակիչ ազնուական Սմբատ և Ցարութիւն Աւիրէզեան Ճահվերդեանները ատրճանակներով և խանջալներով զինուած գնում են, որ սպանեն Աղա Մէհրաբեան Ճահվերդեանի ուղունարցի Տիգրան Լալայեան հօվուին, որ ոչխարի հօտը արածացնելիս է եղել «Քորէքաղլուխ» անուանուած տեղը։ Յիշեալ չարագործները մօտենում են, որպէս գի հնարքով կապեն Տիգրան Լալայեանցի ոտքն ու ձեռքը և տանեն Քոբայրի ահագին բարձրութեան բարափից վայր ձգեն։ Տ. Լալայեանը նկատելով չարագործների դիտաւորութիւնը, սկսում է փախչել և խնդրել որ իրանից հեռանան, իսկ չարագործները ընդհակառակը սկըսում են կատաղաբար յարձակուել վերան և մինչև անգամ օգնութեան են կանչում իրանց մօտիկ ազգական հովիւներին, որոնք նոյնպէս արածացնելիս են եղել իրանց ոչխարները, ժողովւում են և կատաղաբար յարձակվում Տ. Լալայեանցի վրայ։ Սա տեսնելով, որ արդէն մտադիր են իրան մահակներով սպանել, ի պաշտպանութիւն իւր անձի՝ արձակում է ատրճանակը և ըստ անգամ յիշեալ չարագործների վրայ, գնդակներից երկուսը դիպչում են Ցարութիւն Աւիրէզեանի կրծքին, որը և իսկոյն մահանում է, Միւս խաշնարածները կալանաւորում են Տ. Լալայեանցին—ձեռքերը թիկունքին կապում և այնքան ծեծում, որ շնչասպառ վայր է ընկնում. ուշքի գալուց յետ սարսափելի դարձեալ ծեծահար անելով բերում են սպանուածի հօրանց գոմն և սիւնից ամուր կապում, փոքր ժամանակից յետ սպանուածի եղբայր Սմբատն հրամայում է Տ. Լալայեանցին զանազան տանջանքների ենթարկել և ապա խեղդել։ Սարսափելի տանջանքներ տալիս վրայ են հասնում մի քանի ուրիշ մարդիկ, որոնք հասկացնում են Սմբատի բարբարոսական արարմունքի վատ հետևանքը, այն էլ ի վնաս իւր։ Սորանից յետ Տ. Լալայեանցի համար թէ կիսամեռ դիակը տանում-դցում են փողոց և իրանք հեռանում, կարծելով, թէ մեռած է։ Տանջանքներ կրող Լալայեանը ուշաբերվում է, բայց վայ այն ուշքի գալուն—խեղճը մինչև այժմ էլ սնանեակում իւր ողորմելի մօր գրկում իւր սև օրն է ողբում։

Այս անցքի պատճառն եղել այն, որ իբր թէ՝ Լալայեանը ցանկութիւն է յայտնել ամուսնանալու չարագործ Սմբատի եղբօր Գրիգորի քրոջ հետ, որպիսի կապակցութիւն դուր չէ եկել գոցա՝ որպէս ազնուականներին։

Մի այսպիսի մարդասպանութիւն պատահեցաւ և՝ Ղաչաղան գիւղում մի ամիս առաջ, ուր երկու մարդ կռուելիս «դագանակներով» մէկը միւսին անշնչացնում է. այս կերպ մարդասպանութիւնը այստեղ սովորութիւն է դարձել։ Սովորութիւն է դարձել և՝ աչքի փախցնել, այն էլ մերձ—չ'հաս բարեկամներից. այդպիսի դէպք եղաւ և դարձեալ Այգեհատում։

Լօռեցի

* *

լաւ գահի վրայ. Նրա եռեւում հաւաքուեցին իսկոյն բոլոր մինիստրները, իսկ մի կողքին կանգնեց մեծ վեզիրը։ Ծերունի տանուտէրը մի կողքից, մի քիչ առաջ եկած, ձեռքերը կուրծքին՝ սպասեց։

—Ո՞ւր է Ագիզը—Սուլթանը, հարցրեց ինքնակալը։

Ագիզ—Սուլթան կոչուողը մի կարճահասակ գեր պատանի էր, Նասր-Էդդին Շահի սիրելին մանկութիւնից ի վեր և մեծ արտօնութիւն վայելողը։ Այդ այն պատանին էր, որ իւր նման պատանիների մի գունդ կազմած, յաճախ փողոցային անկարգութիւններ էր անում և անպատիժ մնում. Նրա ծառաները համարձակ կերպով խայտառակութիւններ էին անում, մինչև իսկ ձիապարտը կանգնեցնում, սրան նրան ծեծում և ոչ ոք չէր յանդգնում գանգատ իսկ յայտնել։ Դեռ նոր էր որ մի օր երբ որսի գնալով ոչ մի որս չէր գտել, լիքը հրացանը ձեռքին, ջղայնութեամբ հրամայել էր իւր մի ծառային՝ իբր որս կանգնել և հանդարտութեամբ հրացանել էր նրան... ու անպատիժ մնացել...

Ահա այդ լիրբ պատանին էր, որ իւր անունը լսելուն պէս՝ առաջ եկաւ և խոնարհութիւն արաւ։

—Ուրիշ անգամ եղե՞լ ես բաբայի տանը, հարցրեց նրան Շահը։

—Ո՛չ, ձերդ մեծութիւն.

—Լաւ ուրեմն, հանդարտ մնա, որ բանաստեղծութիւններ լսես... բայց, դարձաւ նա ծերունուն—լաւ բանաստեղծներ կա՞ն այս երկրում.

—Այո, ձերդ մեծութիւն. Խաղանին այստեղ է.

—Հա՞... այդ բանաստեղծը միշտ լաւ է գրում... ապա, կանչիր թող մի բան արտասանէ։

Ծերունին շտապեց որդուն նայելու էլ վազեց դէպի բանաստեղծների խումբը և Խաղանին դուրս եկաւ իւր լուրջ ու համակրելի դէմքով՝ շահի առաջ։ Ինքնակալը պէնսնէով զննեց մի քիչ նրան լաւութեամբ, յետոյ ասաց.

—Սա՞ է Խաղանին, Միրզա Հաբիբուլլահը։

Բանաստեղծը խոնարհուեց։

—Դու կարդացե՞լ ես իմ գրուածքները, Խաղանի. . . խօսիր, խօսիր։

—Ձեր ծառան կարդացել է իւր տիրոջ գրուածքները. մեր տէրը գիտէ իւր զգացմունքներով բարձրանալ բոլորից...

—Աֆֆէրիմ, աֆֆէրիմ, գոչեց շահը —դէհ, եթէ դու էլ մի լաւ բան ունիս՝ արտասանիր. . .

Բանաստեղծը դողդոջուն՝ սկսեց արտասանել։ Ամենքը լուռ էին, ոչ մի շշուկ չէր լսվում։ Ինքնակալը ուշադրութեամբ լսում էր և երբեմն հաւանութեան խոստ գլխով նշաններ անում։ Բանաստեղծը նկատում էր այդ և աւելի սիրտ առնում. և ահա մի րոպէ այն սարսափեան ոգևորուեց, որ մոռացաւ ամեն ինչ. մոռացաւ՝ որ, երբ հետևեալ տողերն էր արտասանում.

...Փառք հուզէի այն փառքն անմահ,
աննման,
Որ գոյանում է թշուառների օրհնութիւնից.
Ուր ցաւագարն է գտնում կազդ,
Եւ հալածեալը՝ պակաս գնաց,
Փառք հուզէի, այն փառքն անկեղծ,
Որ բղխել է տրուած կեանքից
Որ հիւսել է գալար ճիւղից
Որ չէ տեսել արիւն կամ բիծ...

Այսպիսի խորունկ շեշտով ու ոգևորութեամբ արտասանուեցին այդ խօսքերը, որ Շահը սաստիկ զգացուած՝ գոչեց։

—Աֆֆէրիմ, մաշալլահ.. իսկ որ դու Խաղանի ես.. ես քեզ ոչ մի ուրիշ փառք չեմ տալ—քիչ կլինի քեզ համար. մնա այդ սիրտով... քեզ հարուստ ռոճիկ միայն՝ որ նեղութիւն չըզգաս և միշտ գրես. . . բարաքալլահ. . .

Դրանից յետոյ ինքնակալը ոտքի ելաւ և սկսեց խօսել մինիստրների հետ ու մի քանի պաշտօնականների նշմարելով մօտ կանչեց։ Թահմաս խանը սարդարը իր երկար հասակով անտես չմնաց։ Շահը նրան էլ մի քանի խօսք ասաց և երբ իր մի հրամանի վրայ, գրուած հը բախտաւորութիւն էր սկսում, յանկարծ դարձաւ սարդարին և ասաց.

—Կանչել Մէհտի-Ղուլի խանին։

Մի քանի հոգի վազեցին այս-այն կողմ և երիտասարդին գտան կանգնած երրորդ սենեակի բաց լուսամուտի առաջ.

Երբ Շահը տեսաւ նրան, չափեց ոտքից մինչև գլուխ ուշադրութեամբ, յետոյ մի անըսփորելի ժպիտ ահեց դէմքի վրայ և ասաց շեղ, իր սովորական խրոխտ ձայնով.

—Ո՞ւմ ես գնալ երկիրդ.

Երիտասարդը խոնարհուեց լռութեամբ։

—Լաւ ուրեմն, վրայ տուաւ ինքնակալը—գնա երկիրդ, քեզ նշանակում եմ կառավարիչ քո ժողովրդի.. Սարդարի հետ տեսնուիր...

Ցետոյ մէջքը դարձրեց և դուրս գնաց։ Թահմաս բայլեց դէպի դուռը։ Բոլորը խոնարհեցին դէպի այն կողմը։ Շահը մեկնում էր։

Մէհտի-Ղուլի խանը մնաց քարացած՝ առանց տեղից շարժուել կարողանալու։

Հինգ րոպէից յետոյ Շահը մեկնել էր և հրաւիրեալները խռնուեցին մեծաշուք սարդարի շուրջը, որ հրամայեց բանաստեղծներին՝ արտասանել իրենց գրուածները և նրանց ընծաներ բաշխեց։

Հանդէսը վերջանում էր։ Հաջի-Մէլիք Աղու որդին մօտ եկաւ և մեծ վեզիրին տուաւ իր հօր կողմից մի քանի շահի սիֆիդ (սպիտակ դրամ) որպէս խոնարհ ընծայ և սարդարի փոխարինեց մի գովասանք մատանիով։

Մէհտի Ղուլի խանին փորձեցին մօտենալ շնորհաւորելու, բաց նա մի տեսակ անգիտակցութեան մէջ լուռ՝ խոնարհութիւններ միայն արաւ, մինչ որ Հասան խանը գտաւ նրան և տարաւ դէպի կառքը։

Կառքի մէջ երիտասարդը գլուխը ձեռքերի մէջ առած, նոյնպէս լուռ մնաց և ոչնչով չպատասխանեց իր ընկերակցի հաճոյախօսութիւններին։

—Ո՛ւֆ, գոչեց վերջապէս թօրբը անհամբերութեամբ—փոխանակ ուրախանալու, դու այնպէս ես տխրել, որ կարծես թէ մահուան դատապարտուեցիր։

Երիտասարդը ցնցուեց։

—Մահուա՜ն... սատոյ նա։

Ցետոյ մի րոպէ լռեց և մեղմութեամբ աւելացրեց.

—Այո. գուցէ իրաւունք ունես... և դա շատ աւելի լաւ կլինէր...

Վ. Փափազեան.

(Վերջը հետևեալ համարում)

ԲԱՂՈՒՆՑԻՔ ԵՒ ԳԼՕԹԵՆ!!

Եթէ չեմ սխալվում Գէօթէի մասին են ասում, որ երբ փողոցում տեսնում էր մի հաշմանդամ, մի կոյր, մի մերկ ու բոբիկ երեխայ մի թշուառ կին ողորմութիւն խնդրելիս, աչքերը և ականջները ծածկում էր և շտապում անցնել. կամ թաղնում և յետ էր դառնում այդ թշուառներին չտեսնելու և չլսելու համար։ Զարմանալի նմանութիւն! Նոյնն են անում և մեր բաղունցիները. եթէ տեսնում են մի աղքատ մարդ, որ մի ժամանակ իրանց պէս տանտէր է եղել և իւր յարկի տակ շատ օտարների ընդունել և կարօտեալների խնամել է, ողորմութիւն խնդրելիս, թաղնում են և շտապ շտապ հեռանում. կամ եթէ նոյս առաջին է դուրս գալիս մի վշտից և քաղցից մաշուած կին, կրծքին փալաններով կապած մի գալկահար երեխայ—մայր և որդի «հաց», «հաց», «չոր» աղիողորմ ձայներով դիմում են բաղունցին ականջները ծածկում է, որ նրանց աղերսանքը չլսէ. կամ եթէ բաղունցու առաջ է գալիս մի հաշմանդամ՝ ձեռքը և ոտքը այլանդակուած, մի կերպ քարշ տալով, բաղունցին արագացնում է իւր քայլերը, լաւ համոզուած լինելով, որ հաշմանդամը իւր կեղծ ոտքով իրան չէ կարող հասնել. բաղունցին մինչև անգամ իւր գրասենեակի «սատօրօժին», տան գռնապանին պատուիրել է նրա չթողնել, հեռացնել, մի բան «ռէխնէրովը» տալ յետ դարձնել։

Ցեսնում էք, թէ որքան նմանութիւն կայ բաղունցու և մեծ պօէտ Գէօթէի մէջ։

Բայց ինչու մեծ պօէտը երեսը դարձնում էր և աչքերն ու ականջները ծածկում թշուառներին տեսնելիս։

Ողորմութիւն խնդրելը, մուրալը, մարդկային արժանապատուութիւնը ստորացնող ամենախիստ երևոյթն էր և ահա մարդկային արժանապատուութեան մեծ պաշտպան պօէտը, երբ տեսնում էր մարդուն ստրկացած մինչև մուրալու աստիճանը, նրա մեծ հոգին վշտանում էր մարդկային արժանապատուութեան համար։

Մեծ պօէտը երբ տեսնում էր վշտից ու քաղցից հիւծուած մի մարդ, մի կին, նրա զգայուն սիրտը արիւնով լցվում էր, իւր նմանին այդքան այլանդակուած տեսնելով. երբ այդ մեծ հանճարը տեսնում էր երեխաներին, որոնց հասակը միմիայն անմեղութեան, մաքրութեան և ճշմարտութեան մարմնացումն պիտի լինի, կեղծ կերպով իրանց սուտ ձեռնեցնելիս և մեծերից սովորած զանազան վշտալի, սիրտ ամփոփող խօսքեր ասելիս, այդ մեծ մարդը սարսափում էր մարդկութեան ապագայի համար, տեսնելով նրա մատաղ սերնդին այդքան ընկած. Անկարող լինելով տեսն-

ԱԽԱԼՔԱԼԱՔԸ ԳԶՏԻԿ Է ԲԱՅՑ ՁԱՏԻԿ

Մեր փոքրիկ քաղաքն էլ ունեցաւ ինքնավարութիւն, իւր փոքրիկ քաղաքագլխով, փոքրիկ քաղաքային տնով, փոքրիկ ռոճիկներով և վերջապէս ձայնաւորների փոքրիկ խմբակով, որոնց թիւը հաւասար է տասնեակների թուին։

Բայց ամեն ինչ փոքրիկ լինելով, չկարծէք թէ կատարած գործերն էլ փոքր կամ փոքրիկ են, ո՛չ, փոքրիկ քաղաքագլխի փոքրիկ ճառը այնքան մեծ գործերի ծրագիրներ էր պարունակում իւր մէջ, որ ախալքալաքցիքս երևակայում էինք, թէ մի տարուց մեր աստուածավախ քաղաքը այնքան կըյառաջադիմի, որ գաւառական քաղաքների նախանձը կըշարժի, իւր լուսաւորութեամբ, մաքրութեամբ, կարգապահութեամբ եայլն։ Այդ բոլորը ժամանակով կիրագործուէին՝ ի հարկէ, եթէ այդ ճառի հետ և ունենայինք այնպիսի մարդիկ, որ նախ քան իրանց ռոճիկների մասին մտածելը, մտածէին քաղաքի մասին... Ասենք մի քիչ էլ երախտամոռ մարդիկ ենք, չէ որ Ղըռխ-Բուլաղ վտակի կամուրջը չորս ամիս բոլորովին քանդուած էր և այնտեղ պարբերաբար մօտ քառասուն եզի, բաւն ձիու ոտք կոտրուեց և կարծեմ մի քանի մարդիկ էլ զովանալու համար, կամուրջից դէպի վտակն են թաւալուել։ Ձայնաւորներից մի քանիսը չէ որ հարիւր անգամ բողոքեցին և վերջապէս, մեծ անբաւականութիւններից յետոյ, շինուեց այդ չարաբաստիկ կամուրջը և վերջացաւ կամրջային հարցը, որ Պանամայի հարցից աւելի խճճուած և բարդ գործ էր։ Սա գործունէութիւն չէ և ապա ինչ է. Եւ վերջապէս պէտք է համբերութիւն ունենալ, ինչ անենք թէ բաղանիսների գայռիվայրը չատ անխնամ վիճակի մէջ է, որտեղ կառքով գնացողը վտանգի է ենթարկում իւր կեանքը, ինչ անենք թէ օրական հարիւրաւոր սայլեր ճիգ են թափում այդտեղից վեր բարձրանալ, բայց սայլերի անիւները տեղից չեն շարժւում, այդ բոլորի դէմ ինչ մեղք ունի քաղաքային վարչութիւնը... այդ գայռիվայրը թէև մի չատ չնչին, մի երկու տասնեակ ռուբլու գործ է, բայց չէ որ ամեն ինչ հերթով պիտի լինի։

Քաղաքացիք գանգատվում են, որ չատ փողոցներ լապտերներից զուրկ են, օրինակ. կան այնպիսի տեղեր, որ փողոցի մի կողմը Ղըռխ Բուլաղի ձորակը, իբրև գայլ բացած է բերանը և ծանրքանման ժառերը ցից ցից մարդ են սպառնում, որոնց միջից կռամանաներով իջնում է մի նեղ շաւիղ, դէպի քըշշացող, սառնորակ աղբիւրը, որտեղից օրական թէ ցերեկ, թէ գիշեր հարիւրաւոր մարդիկ են անցուդարձ անում և որոնք պարտական են անցուդարձ անելու, եթէ մինչև անգամ տիրէ գերեզմանային մթութիւն, որովհետև այդ ճանապարհով պիտի հայթայթեն իրանց ամենակարևոր պիտոյքը—այն է ջուրը։ Բայց արի տես, որ հէնց այդ տեղ լապտեր չկայ. Ինչու են մեղադրում վարչութեանը, չէ որ ելեկտրական լուսաւորութեան ծրագիր է կազմուած և վերոյիշեալ տեղի համար մի մեծ լապտեր է նշանակուած, համբերող եղէք տեսէք, եթէ դուք չտեսնէք, ձեր որդիքը կըտեսնեն...

Այդ անբախտ փողոցի և վճիտ սառնորակ աղբիւրի դժախային չաւղի մասին խօսելով, յիշեցի և մի ճշմարտութեամբ համեմատած զուր բամբասանք։ Իբրև թէ, քաղաքագլխի բարեկամը, այդ առանց այն էլ նեղլիկ, ոլոլզազարդ, գոգաւոր, գայռիվայրաչատ, քառանկիւնի—եռանկիւնի փողոցից գողացել է բաւականաչափ հող և պարսպապատել է։ Չնայած հարևանների բողոքին, պ. Քաղաքագլուխը չէ պաշտպանել քաղաքի չահերը և ասում են իբր թէ ծածուկ խրախուսել է նրան, թէ չապիր, պարսպապատիր և որպէսզի ստրիկանութիւնը չարգելէ, գիշերով չինիր, դու երկիւղ մի կրիր, յետոյ ես ձևականութիւնը պահելու և ժողովրդի աչքին թոզ փչելու համար դատարանում կըգանգատուեմ և այնքան կը ձգձգեմ, մինչև որ գործը մաշուի, ծիւրուի և ինքնաբերաբար ոչնչանայ... Բայց ասացէք խնդրեմ, ինչ կայ այստեղ, որ խօսքին բամբասում են, մի՞թէ բարեկամի, իւր, խնամիների չահերը պաշտպանել մեղք է, էլ ինչ բարեկամութիւն, ուրեմն յարգն ու պատիւը ոչնչացել է։

Մանաւանդ տեղիս վարչութիւնը, փայլեց իւր անկողմնապահութեամբ և ճշմարտասէր միտումներով հողային հարցի ժամանակ, որտեղ քիչ բացառութեամբ ամեն մէկն էլ չահեր ունէին։ Երբ իրանց չահն էր շօշափվում, ահագին ճառերով համաձայնութիւն կայացրին, որ խրճալի հարուստներին, որոնք չնչին գներով ահագին հողեր էին տիրած և տասը տարիների ընթացքում տասին միայն չնչին գնի 5%-ը և օրէնքի հակառակ ոչ էլ պատուղարել էին և իբրև մրցանակ իրանց այդ օրինազանցութեան ու անպարտաճանաչութեան, նորից տալ երեք տարի և կէս ժամանակ, որպէսզի պատուղարեն և հին պարտքերը տան։ Երբ հերթը եկաւ աղքատներին, որոնք հետևելով հարուստ հարևաններին, իրանց վրայ հաստատել էին աւելի աղօրմելի խրճիթների համար փոքրիկ տարածութեամբ հողի կըտորներ, զրկեցին վերև յիշուած արտօնութիւնից, որովհետև, թէև հողերը իրանց վրայ հաստատած էին, բայց չնայած իրանց աղքատութեանը, գնա ոչ մի կոպէկ չէին վճարել և դրա համար էլ այդ հողերը ձեռքերից խլեցին։

Վարչութիւնից նոյնպէս պէտք է շնորհակալ լինել մի կարևոր առողջապահական կարգադրութեան համար, այն է վերցնել դռներից նստարան քարերը, որովհետև տեղիս կլիման խիստ լինելով, միշտ այստեղի քարերը սառն են, այնպէս որ, երբ դուրսը գողտրիկ լուսինն է լուսաւորում, բիւրաւոր աստղեր են ճռվառում և օրէնքի անուշ մեղեդին է հնչում, մեր աստուածավախ քաղաքացիք, չատ անգամ մոռանալով քարի սառնութիւնը, նստում են այդ նստարանների վրայ, անուշիկ օդը ծըծում, բնութեան գեղեցկութիւնը վայելում և չոյոր սրտի մեղեդին լսում, որի ընթացքում սառն քարից վարակւում զանազան հիւանդութիւններով և կարծեմ հէնց այդ է պատճառը, որ Ախալքալաքի ժողովուրդը լայնաթիկունք և կարմրայտ են...

Տեղիս վարչութիւնը չատ սիրահար է գեղարուեստի, օրինակ, առաջ իրենց ագահութեամբ փայլում էին տեղիս խանութների թանձրամորթին խափաններըը, որոնք ահագին մեծութեամբ կախ էին ընկած երկու ձողերի վրայ, որ պէտք է ասած, չատ՜ վատ էր ազդում մարդու ջիղերին, բայց գիտական գաւազանով այդ բոլորը մի ամսուայ ընթացքում փոխուեց ծալծլուած դռներ, որոնք իրանց ուղիղ համաչափ չարքով յիշեցնում են գեղարուեստասէրներին, Վասպուրականի, Հայոց-ձորի Բեյի քարացած ուղտերի կարաւանը և սա մեծ յառաջդիմութիւն է և դա շնորհիւ մեր հանճարեղ վարչութեանը. . . Ուրեմն յայտնի կացուցանելու համար, կըկրկնեմ վարչութեան կատարած մեծամեծ յեղափոխութիւնները 1) Քարեայ նստարանների ոչնչացումն. 2) Մեծամարմին խափանքը ծալծլայ դռների փոխարինուիլը Ահա երկու անկնահատելի վարձք քաղաքիս, վարչութեանս ձեռամբ կատարուած մի տարի վեց ամսուայ ընթացքում..

Չմոռանամ և մի խոշոր կարգադրութիւն. յայտնի լինի ձեզ, յարգելի ընթերցողներ, որ մեր Ախալքալաքը չըրջապատուած է գեղեցիկ, հսաուլտ, գոյնզգոյն. . . աղբաններով, որոնք, պէտք է ասած, պարծանք են ախալքալաքցոց համար, որովհետև այդ աղբնոցները ապացոյց է քաղաքիս մաքրասիրութեան և դրանք ցոյց են տալիս, որ թէև ախալքալաքցին չի սիրում, որ իւր տունը անմաքուր լինի, բայց և չի ուզում բաժանուել այդ գանձագաւոյն, պէս-պէս կեղտոտութիւններից և դրանցով շրջապատում է քաղաքը, նման Կապոյր բերդի մարտիկներին, որպէսզի սարսափելի թշնամիները, այն է ժանտատենդ, ժանտախտը, հեղհեղուկ խօլերան, կարմրախտը տիֆը և այլն չառ ու ցաւերը չյարգողան մօտ գործել մեր մարտկոցաշատ քաղաքը. . .

Վարչութիւնը աչքի առաջ ունենալով որ այդ ազգային մարտկոցները այնքան կարող են մեծանալ, որ քաղաքը բոլորովին իրանց տակը թաղեն, այժմ կարգադրել են, որ աղբը, կեղտը և ամենայն անպիտանութիւնը տանեն Ղըռխ Բուլաղ փոքրիկ վտակը, որով գեղեցկափայլ արած կըլինին և դրանով կը ոչնչանան այդ առանց այն էլ կեղտոտ վտակի մէջ գտնուած բոլոր ցաւ ու չարի բացիլները... և որանից յետոյ, ախալքալաքցիք հանգիստ սրտով լուացք կանեն այդ կեղտով ախտահանած վտակի մէջ. .

Ինչ վերաբերում է տեղական մթերքների գներին, շնորհիւ մեր վարչութեան, բաւականին թանգ են, համեմատած երջանկայիշատակ դեպուտատական տարիների հետ, ի հարկէ, սա էլ մի մենաշնորհ է, որ պէտք է ամենայն սառնասրտութեամբ վայելենք ի փառս քաղաքային վարչութեան...

Վերջացնելով այս նիւթը, ցանկանում եմ նորաթողրց վարչութեանը անաչառ կողմնապահութիւն, եռանդալի թուլութիւն, սթափեցուցիչ անհեռաթիւն և փրփրագարդ ճառեր...

Մթոս։

17 հոկտ. 1897 թ.
Ախալքալաք։

* *

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳՈՒՈՒՄ

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Հայ դերասանական նորակազմ խումբը երեկ ներկայացրեց «Դոն Գրիգորիօ» կոմեդիան 3 արարուածով, և «Մենիկ» վօդեվիլը 1 արարուածով. առաջինը՝ թարգմանութիւն իտալերէնից պ. Թուրեանի, երկրորդը՝ փոխադրութիւն պ. Վրոյրի—Արման Բօզոյեց։ «Դոն Գրիգորիօ» մէջ պ. Թուրեան առաջին անգամն էր բեմ դուրս գալիս Բագուի հայ հասարակութեան առաջ. Թատրոնը ծայրէ ի ծայր լիքն էր և դա հասկանալի է ի հարկէ, մէջտեղ հայի պէս կանգնած էր սաղանդարը, յայտնի կատակերգակ և հայ բեմի հարազատ զաւակներից մէկը՝ Պալի Թուրեան. ահաւասիկ այն ձգողական ուժը, որին բարի գալուստ մաղթելու և իւր անկեղծ համակրանքը ցոյց տալու չտապել էր հայ հասարակութիւնը և նա չէր սխալուել։

Նախ խաղացին «Մենիկ» վօդեվիլը, որ անցաւ չատ յաջող, շնորհիւ պ. Պետրոսեանի (փառարքան ձերմակեանի դերում) և շնորհալի տիկին Մելիքեանի (Դոյլանէ Սերովբեանի դերում) վերին աստիճանի կենդանի խաղին։ Այնուհետև սկսուեցաւ կատակերգութեան ներկայացումը։ Թուրեանը բեմ դուրս գալուն պէս ընդունուեցաւ բուռն ծափահարութիւններով։ Պիեսը բովանդակութեան կողմից չատ անյաջող էր. ցոյց տալու համար, թէ Թուրեանի պէս տաղանդը միայն կարող է տանել դարձնել այսպիսի հնացած, ձաչուած պիեսը, վերականգնենք ընթերցողի յիշողութեան մէջ նրա համառօտ բովանդակութիւնը։ 50 տարեկան Մարքիզ Փիլ (Վրոյր) երկու որդի ունի, մեծը Հանրի, փոքրը Փեփինէթօ, (Հանրի՝ Օհանեան, Փեփինէթօ՝ Աւետեան). սրանց դաստիարակն է երկար տարիներ ի վեր—Դոն Գրիգորիօ՝ բարի ծերունին. յետոյ գալիս են Մարքիզի ծառան Սիմէոն (Հայկազեան) և Լէօնարդա (օր. Վարդուհի) պառաւ և անտանելի աղախինը։ Մարքիզը մի սարսափելի, խռովուած տանտէր է, խիստ հոգում է երկու բարոյականին և կրթական, ամեն կերպ ճնշում է նրանց և թոյլ չէ տալիս որևէ կապ ունենալ արտաքին աշխարհի հետ և մանաւանդ կանանց շրջանի հետ. Նա ցանկանում է բարոյական որդիք ունենալ, այսպէս է նրա հասկացողութիւնը։ Սակայն չատ շուտով նա հիասթափվում է և տեսնում ու համոզվում իւր սխալ ուղղութեանը։ Հանրին սիրահարվում է հարևանի աղջիկ Ջիլդայի վրայ, որից և զաւակ ունենում է, մինչև անգամ աղջիկ էլ է ունենում և հօր տանը ոչ ոք չգիտէ, բացի Դոն Գրիգորիօից. փոքր որդին—սատուշ Փեփինէթօն էլ սիրահարվում է պառաւ աղախնի վրայ։ Վերջապէս հայրն իմանում է այս բոլորը, ներում է Հանրին և օրհնում նրա ամուսնութիւնը, իսկ փոքր որդուն Փեփինէթոյին յանդիմանում իւր յիմարութիւնների համար—պառաւ Լէօնարդան էլ վռնդվում է։

Ինչպէս տեսնում էք, պիէսը ներկայացնում է մի «չիլափլաւ», որի մէջ միսը, ջուրը և բրինձը խառնուել են ցեխ դարձել—ասելու մի չատ անխորհուրդ և անհամ զանգուած—և մէջտեղ երևում են միմիայն եփուած և մաշուած եզան անպէտք ոսկորներ, որ պէտք է հանել ամանից և դէն շպրտել. ահաւասիկ այս քաոսի մէջ էր գործում բարի Դոն Գրիգորիօ—Թուրեանը։ Խաղի տեխնիկայի կողմից Թուրեանն անհաման է, նա տարաւ յաղթութիւնը, սակայն թող չտառծէ մեր հայ-կամիկը, թէ հասարակութիւնը պարտուած է, այսքան էլ կը բաւէ մեր հայ կամիկին Զգուշանայ, սակայն, վայել է արդեօք մի երկու ժամ մանր նկատողութիւններ անել, միջանկալ կերպով, թէ ոչ բոլոր և այնպէս համաձայնվում ենք ասելու, որ հայր-կամիկ—Թուրեանը գիրք լաւ չէր ընտրել և լեզուն կէս ռուսահայ կէս տաճկահայ բարբառ էր, որոնք որոշ չափով ներգործում են խաղի պայծառութեան ամբողջութեան վրայ։ Միւս դերասաններն էլ պատւով տարան իրանց բաժանած դերերը և դրանով նպաստեցին պայծառութեան ամբողջութեան. Ներելի լինի մեզ միայն նկատել պ. Օհանեանին, որ դերը արտասանելիս խօսէ և ոչ երգէ. պ. Վրոյր (մարքիզ Փիլ), Հանրի մեծ որդին (Օհանեան), Փեփինէթօ փոքր որդին (Աւետեան), Ջիլդա (տ. Աւետեան) և Լէօնարդա (օր. Վարդուհի) ամենքն էլ իրանց տեղերումն էին. Աչքի է ընկնում գեղահասակ և շնորհալի տ. Աւետեանը, իւր հայերէն մաքուր արտասանութեամբ, կենդանի խաղով։ Ընդհանրապէս վերցրած, նկատվում է դերասանների դէկավարող մի հմուտ ձեռք, որից առաջացած ներդաշնակ հասարակ անցնում է դերասանների վրայ ներգերով, միացնում է նրանց տարբեր տարբեր ուժերը և սահմանում է մի ամբողջութիւն. Բայց գիտէք այդ ձեռքը որունն է—դա մեր հաշտաւոր դերասանուհի յարգելի տիկին Հրաչեայի ձեռքն է, ընթերցող։ Մեզ հաւատացնում են, թէ այդ գիտական ձեռքի ցոյց տուած հովանաւորութիւնը ժամանակաւոր է, մանաւանդ մեզ համար ցանկալի չէ այդ և մենք չենք կամենում հաւատալ, թէ մի «ձեռք», որ այդչափ հմտութիւն ունի դեկավարելու, հովանաւորելու, կարող է «ժամանակաւոր» դարձնել իւր հովանաւորութիւնը։

Երեքշաբթի տրվում է «Կամելիազարդ տիկին», տ. Սիրանոյշի մասնակցութեամբ. կանխապէս կարելի է յուսալ, որ յաջող կանցնի։ Այժմ երկու խօսք մեր հասարակութեան հասցէին. ժամանակ չէ՞ արդեօք, որ մի փոքր էլ նա պարտաճանաչ դառնայ, իւր ժամանակին թատրոն յաճախէ. ներկայացումներն սկսվում են ճիշդ յայտարարուած ժամին—8½ ին, սակայն մինչև ժամի 10 ն էլ եկողներն լինում, որոնք ներկայացման ժամանակ ներս մանելով, խանգարում են հասարակութեան հետևել խաղին։ Ցանոյ յայտարարուած է, որ երկրորդ զանգակը տալուց իւրաքանչիւր ոք աշխատէ բռնել իւր տեղը—այսպիսով էլ տեսնում էր նոյն անկարգութիւնը, վարագոյրը բարձրացած է, արդէն խաղում են, բայց հասարակութիւնը դեռ նոր է գտնում իւր տեղը։ Ես այժմ այսչափ։

Երշարունի։

20 հոկտ. 1897 թ.
Բագու։

* *

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ

(Շարունակութիւն *)

Ժանրիստների շարքում պիտի դասենք նաև Թիֆլիզեցւոց արդէն յայտնի quasi-նկարիչ պ. Սրապեանին։ Ասածս խստութիւն ու ցանկութիւն չենք զգում այդ պարոնի գործերը ընդունելութեան առնելու, որովհետև, չատ չնչին բացառութեամբ, դրանք ամենամեծ կրիտիկայի անգամ չեն դիմանում։ Միքը անգամ էլ «Արձագանքի» էջերում խօսել էր պարոնի արտադրութեան մասին և մի չափ գրելէ յանդգնութեամբ, որովհետև չըգիտենք թէ ինչպէս ընդունելու պարոնի արուեստը։ Ըստ բանաստեղծին՝

Տեղը եկաւ՝ հայ է նա,
Տեղը եկաւ՝ այլազգի.
Իրօք ոչ այդ և ոչ այն,
Այլ ծնունդ մի նոր ազգի։

Զգիւտնեք պարոնը ինչ զգալացի է պատկերում՝ [illegible] թէ մանրամասն (detaillé) նկարչների։ Նրա խաղերի նկարների մէջ և այս կայ և այն, բայց իրօք նկարը ոչ այս է և ոչ այն։ Մեր երիտասարդ նկարիչները բեղմնաւորապէս և պ. Սրապեանի մանաւանդ, չատ թիւր կարծիք ունին էմպրեսիոնիստների մասին, որոնք, փաստացում անենք, նոյն իսկ Եւրոպայում համակրողների չատ սահմանափակ շրջան ունին։ Այդ տեսակ նկարներ չատ դժուար է և հմուտ վարպետի գործ. էմպրեսիոնիստները առարկաների մանրամասները չեն արտադրում, մեծամեծ վրձինի լայն հարուածներով (larges coups de pinceau) են անում, դրանցմն և այլն չեն մշակում, բայց չատ անգամ վրձինի մի բանի լայն, սահմ թէ անհոգ (negligé) հարուածներով զարմանալի կենդանութիւն և ռելիեֆ են տալիս նկարին։ (Օրինակ հէնց պ. Ցախբեանի վերև յիշած «հայ գիւղացու գլուխը»). Եւ որ գլխաւորն է, նկա-

*) Տես «Արձագանք» № 122.

ու տեղը օգնել, թշուառութեան վերջ տալ և մարդուն սառցանալուց ազատել, չտապում էր հեռանալ, որ իւր չկացած գըրչով աւելի վառ և աւելի մեծ եռանդով թափէ իւր զգացումները և աւելի գայրայթով պաշտպանէ մարդկութիւնը անկումից։

Բայց հարց է, ինչու բաղուեցին էլ է փախչում թշուառութիւնը տեսնելիս, մի՞թէ նրա սիրտն ու հոգին էլ է վշտանում, իւր նման մարդուն տեսնելով ընտարացած մինչև մուրալու աստիճանը, թէ իւր բախտին է վախենում։ Իրօքութիւնն այն է, որ այսօր գաղթականները, որբերը, հաշմանդամները բաղուեցուն վշտացնում են, նա նրանցից փախչում է ասելով. «Աչի ես գեաղթըկան էք ասում, հինչ էք ասում, մեզի լավ կերան ալի. եանի մեզի հինչ են տալ որ չեն կարանում եդ անել որ քեամական էլ մեզի վերայ գալէթ գիրողները (կըրահաչ) են տամ...»։

Իրանց դիմաց հաշմանդամին, որբին, վշտահար կնոջը և գաղթականին սառը, երեսնիվայր, վերև յիշած խօսքերն է շպրտում. Նոցա վարմունքը այնքան սառն է եղել, այնքան երես բացող, որ այն գաղթականները, որոնք սկզբում, նախ քան մի բան խնդրելը, կարմրում, դեղնում էին ամօթից, այսօր ցուրտ, վիշտը և քաղցը նրան այն աստիճան սառեցրել է, որ նա այլ ևս իրան երեսին ասած սառն վիրաւորական խօսքերից չի քաշվում, այլ աւելի յամառութեամբ բաղուեցու յետևից է ընկնում, մինչև նրա տունը, մինչև նրա կանտորը։ Այդպիսով բաղուեցու անտարբերութիւնը, նրա անսրտութիւնը և կոպտութիւնը բաղցածներին թողել է փողոցում...

Այդ օրինակով է կրթվում և մեծանում բաղուեցոց նոր մատաղ սերունդը, իրանց ծնողներից սովորելով մեռցնել իրանց մատաղ սրտերում կարեկցութիւնը և ամեն մի մաքուր զգացմունք։

Ի՞նչով է արդարացնում բաղուեցին իւր այդ վարմունքը, անտարբերութիւնը. բոլորն էլ ցոյց են տալիս «աղքատանոցը», այդ արկածալի հիմնարկութիւնը. «Ձեզի համար է շինած, բինացէք այնտեղ ալի...»։

Այդ արկածալի «աղքատանոցի» մասին ես էլ, ուրիշներն էլ չատ ենք գըրել. դուք արդէն գիտէք, որ սրանից չատ տարիներ առաջ, մի քանի ապէրներ, (որոնց ընդհանրապէս ասվար ենք ծաղրել), ինքնաբերաբար շինում են այդ շինութիւնը և իրանց խոկքի կորածի պէս կառավարում, խնամելով պատահած աղքատին, որբին և օտարականին, այնքան, որքան կարողանում են։ Բայց մեր այժմեան երիտասարդութիւնը դժգոհ էր հին վարչութիւնից և կամենում էր այդ հիմնարկութիւնը տանել—«դարուս գաղափարների և պահանջների համեմատ» և սկսեց, ինչպէս արդէն ընդունուած է մեծ ազգերի մէջ, ագիտացիա անել—«հներին» տապալել, և շուտով հասաւ իւր նպատակին։

Ընտրուեցան նոր մարդիկ բայց աղքատանոցի վիճակը միայն վատթարացաւ և թշուառները մնալով փողոցներում սկսեցին աւելի մեծ եռանդով մուրալ, որովհետև «նոր», «թարմ» հոգաբարձութիւնը աւելի անընդունակ երևաց քան հները։ Եւ ահա մեր այդ արկածալի աղքատանոցը մնաց առանց հոգաբարձութեան, կառավարում է մի քահանայ, որը ոչ մի աջակցութիւն չզգանելով մոլորուել է։

Այս ինչ բան է, շինութիւն ունինք, հարստութիւն անհամար, աղքատներ և թշուառներ ուզածդ կամենաք, բայց գործը յաջող չէ գնում, ինչու, ինչո՞վ բացատրել—միթէ իրաւ բաղուեցիք նաւթի ֆոնտաններով կլանած, մեռցըրել են իրանց սիրտը, զգացմունքը, կարեկցութիւնը, թէ մենք, առհասարակ «նոր բէժիմը» մարդիկս—հասարակական գործունէութեան ոյժ և եռանդ չունինք, քաղաքացիական համաձայնութիւն չունինք, ես կարծում եմ այս վերջինն է գլխաւոր պատճառը, քան բաղուեցիների անսրտութիւնը։

Ես կարծում եմ որ մենք հասարակական գործունէութեան հասունութիւն չունինք, մեզ պակասում է իսկական գործով ոգևորուիլը—, տեսէք ոչ միայն Բագվում, այլ ամբողջ Կովկասում—մենք երիտասարդներս—պիւօյի բակալները առաջներս դրած ընում, դատափետում ենք հին գործիչներին՝ նրանց փթած—մեռած անուանելով, մենք կարդացած գրքերից անգիր արած ֆրազներով ծըրագրներ ենք մշակում, «դարուս ոգուն և պահանջներին համեմատ» — գործունէութիւն ընդգծում, ագիտացիա ենք անում, «նոր ընտրութիւն», «հաշուետւութիւն» պահանջում, ահագին աղմուկ չփոթ բարձրացնում և վերջ ի վերջոյ մեր ուզածին հասնում ենք, կամ ընտրվում ենք կամ մեր ուզածին ընտրում. բայց թէ ընտրողները և թէ ընտրուողները իրանց բոլոր ոյժը, եռանդը վատնած լինելով նախապատրաստական ժողովներում և ագիտացիա անելով, հէնց որ ընտրում և ընտրվում ենք, էլ մոռանում ենք մեր քարոզած բայց չը հասկացած գաղափարները, մշակած ծըրագիրը— և «նոր բէժիմը»։ Ընտրողները հանգստացած և ինքնաբաւական հետանում են, իրանց գործը վերջացրած համարելով, ընտրուողներն էլ «հին բէժիմը» տապալած տեսնելով, «նոր բէժիմի» համեմատ ծրագրներ մշակելով են ըզբաղվում, այն ինչ գործը քայքայվում է։ Այսպէս է լինում ուսումնարանի հոգաբարձու ընտրելիս, Բարեգործական Ընկերութեան անդամ ընտրելիս, եկեղեցու—կամ աղքատանոցի հոգաբարձու ընտրելիս։

Վերցրէք Կովկասի մեր բոլոր հասարակական հիմնարկութիւնները, և դուք ոչ մի թարմութիւն, նորութիւն դարուս պահանջներին համեմատ, յառաջդիմութիւն չէք տեսնի, թէև հին «բէժիմի» ձեռքից անցել են—նոր «բէժիմին» պատկանողների ձեռքը. ուսումնարանի հին շինութիւնը և հին ուսուցիչները, իսկ նորերը աւելի վատ քան հները Բարեգործ. ընկերութիւնները ոչ մի նոր եկամտի աղբիւր չեն գտնում—նրանց գործունէութեան ծաւալը և ուղղութիւնը նոյն է մնում—նախահաշուի մէջ և ոչ մի փոփոխութիւն, այն է՝ ինչպէս հինը նոյնպէս և նորը, այս ինչ գումարից % այսքան, այսինչ շինութիւնից և կամուս այսքան—բոլորը այսքան, որ ծախսվում է արդէն անցեալ տարիներից կայացրած որոշումների համեմատ։ Նոյն վիճակի մէջ են մնում և աղքատանոցները և այլ հիմնարկութիւնները, որովհետև մենք հասարակական գործունէութեան հասունութիւն չունինք, որովհետև մեր եռանդը և ոյժը վատնում ենք—ընտրողական պայքարների և անգիր արած ֆրազներով ճառեր տալու մէջ։

Իրաւ, եթէ այդպէս չլինէր, միթէ Բագուայ պէս մի հարուստ քաղաքում մի հոգաբարձութիւն չէր կարող մեր աղքատանոցը փայլուն վիճակի մէջ պահել. եթէ այդպէս չէ, ինչու մեզ բոլորիս լաւ ծանօթ մի յարգելի պարոն, ամեն տարի, ինքն առանց ընտրուելու, առանց աղմուկներ բարձրացնելու, առանց ոչնչէ կուսակցութեան սահման լինելու և պատկանելով «հին բէժիմին»՝ կարողանում է—տարեկան մի պատկառելի գումար ժողովել, որով խնամում է որբերին, աղքատներին և չքաւոր աղջկերանց ամուսնացնելով։ Դա այդ բաւականչէ, Զօրհեանց և Զատկի մեծ տօներին չքաւորներին և օտարականներին ընդհանուր ուրախութեանը մասնակից անելու համար, ամեն տան համար սանում է և իր ձեռքով ուղարկում տներ յարմար կերակուրներ և չարեր։ Այդ պարոնն անձամբ ամբողջ քաղաքը չըրջում է, անձամբ իրան դիմողների կարիքները ստուգում։ Նա գիտէ որ թաղում որբ, աղքատ, օտարական և մարդու տալու աղջիկ կայ։ Եւ ինչ էք կարծում, նրա գործունէութեան տրամադրութեան տակ լինում է ամեն տարի—3000—4000 մի գումար. որ ոչ մեր յայնծաւալ Կովկասեան Բար. Ընկերութիւնն է ծախսում չքաւորների համար և ոչ էլ մեծահաշակ Բագուայ Մարդ. Ընկ., չնայելով որ ամեն մէկը դրանցից ունի 9 ը անգամից բաղկացած խորհուրդ, չնայելով օրէնքով իրաւունք ունի ժողովարարութեան և վերջապէս չնայելով որ հասարակութեան ուշադրութիւնը այդտեղ է մտնում։

Ինչու է այդպէս, ինչու մի մարդ կարողանում է գործել և հասարակութեան աջակցութիւն է գտնում, իսկ մեծ ընկերութիւնները չեն կարողանում բաւականացից դուրս գալ։ Որովհետև մենք բաւականանում ենք ագիտացիայով, ծրագրներ մշակելով, յարձակումներ գործելով, բաւականանում ենք հներին տապալելով, ընտրուելով կամ ընտրելով. որովհետև մենք հասարակական գործունէութեան հասունութիւն, միաբանութիւն չունինք։

Արդ, երբ մի հոգին աւելի գործ է կատարում թշուառներին օգնելու համար, աւելի լաւ չէ մեր աղքատանոցն էլ յանձնել նրա խնամքին, քան դարձնել կռւի և պայքարի ասպարէզ։

Փակէ այդ բարերարի խնամքով մեր փողոցներում այլ ևս բաղուեցու առաջ չեն դուրս գալ աղքատները և իրանց հաշմ անդամով և ձեռքերով թշուառները և բաղուեցին սարսափած չի լինի իւր աչքերը և ականջները ծածկելու մեծ պօչտ [illegible]։

Ս. Բալայեան



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie"

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն

„Ն. ՊԱԿԷ եւ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կ՚ընէ ՄԱՐՍԷԼԻԱՅԷ ԸՍԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու չաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և

ԸՍԹՈՒՄԻՑ ԳԱԼՈՎ ՄԱՐՍԷԼԻ ՏՐԱՆԶԻԹ, ՕԶԵՍՍՈՒ ԵՒ Ս. ՓՕԼԻ ՎՐՉՈՎ

Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, հոկտ. 29 նոյ. 10 ՄԱՐՏԻՈՒԻՑ չորեքշաբթի նաւագնաց է ԳԵՐՄԱՆ,

և այսպէս երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երկի. 4 ժամին

Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւնները ստանալու համար լաւ բարէհաճեն դիմել ընկերութեան գործակատարները

Բաթումում.—Վլիտոր դ՚Ալեսսին, Նաթիրեժնայա.
Թիֆլիսում.—Պ. Օ. Ֆ. Բարիկինդանեանին, Մեծի փողոց, Նախկին Ղուրմանու բարեկեսայա.
Բագուում.—Պ. Մ. Դիլոյարեանին, Գալերնայինի հրապարակ, Նոմերօսնյ կամուր.—Պ. Մելչիսեր Հերշելմօղլին. (20—ե)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՐՈՒԱՀԱՏԱՐԱՆՈՅՆՈՒՄ (Տփղիս)

ՄՏԱՑՈՒԹԵՑԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՔՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԼԵԼ ՆՈՐ ԴՐՔԵՐԸ.—

	Ռ. Կ.
Թ. Ա. Խաչատրեանի, կերակուր պատրաստելու ձեռնարկ. 1897 թ. գինն է. —	40
Ս. Աւետիքեան Բաքւեցիի. Մանիպուլի. 1897 թ. գինն է. —	20
Ն. Հէր-Պարապետեանց. Խաչասուր Երեվանի. 1897 թ. գ. —	60
Ս. Զաքարեանի. Ամենայն նամականիի. 1897 թ. գ. —	1 50
Գ. Ղանէշեանցների. Մարգարտաներգութիւն, մեզզո. Հ. Լալայեան 1897 թ. գ. —	40
Ծոցի օրացոյց ս. Էջմիածնի տպարանի. —	20
Ղազարիբեան Ն. Նոյ. Գեօնական քարոյական խորհրդածութիւններ, 10 հատ. Վաղ. 1897 թ. Թիֆլ. գինն է. —	20
Տէր-Միքելեան. Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին և իւր սուրբ կարգերը. Վաղ. 1897 թ. գ. —	60
Գիւրիօ Ի. Գասպարեանցների և Ժառանգականների գործարանի Վաղ. 1897 թ. գ. —	60
Նազարեանց Եմմ. քահ. Գարդ քարոզներ, ժողովրդական ընթերցուածների համար. Զ. գիրք. գինն է. —	20
Խաչաքենց Գր. Միշտասկզբան ազնիւ Գրիգորի Լուսաւորչի պատմական վիպասանութիւն Վ. 1897 թ. գ. —	15

(5—3)

ԼՈՑՍ ՏԵՍԱԼ

Ս. ԷՋՄԻԱՁԻՆԻ

ՓԱՌԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՑՑ 1898 Թ.

Վերջապատ Կաթողիկոսին, ս. Էջմիածնի, Գէորգեան ճեմարանի և այլ պատկերներով զարդարուած. այլ եւ ամբողջ Տարուան Եկեղեցական եւ վիճակագրական տեղեկութիւններով։

Պատրաստուած է վիճակային կոնսիստորիաների և Տպագիր կառավարչութիւնների. 8 փ ի ս ո ւ մ ի Գնահատական, իսկ Բ ա գ ո ւ մ ի Բաժին դասամատեանների. Մեծ քանակութեամբ գնելու 20% զեղչում կը լինի, պէտք է դիմել ս. Էջմիածնի տպարանին ժողովի այս հասցէով՝

св. Эчмиадзинъ. Типографскому Комитету. (10—2)

ԱԳՈՒԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵՐԱԿՕՐ“

Բարեշրադոյն Տասնամեայ 1872 թուին Մոսկուայում Թիֆլիզի գլխաւոր գործակալութիւնն ընդունում է

ԿԵՆՑԱՂԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամէն տեսակ անշարժ և շարժական կալուածի

ԿԵՆՑԱՂԻ ԵՒ ԳՐԱՎԱՏՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ

առանձին ձեռնադրութեամբ, որոնցից ընդհանուր պայմանները, որոնցից ընդհանուր պայմանները, պարտադիր ապահովագրութեան ընդունման կանոնները, ապահովագրողները ամենակից են ընկերութեան օգուտներին.

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԻՐՔԵՐԻ ՆԵՐՔԻՆ

Ժամային գործարանների և ամենատեսակ անձնոց ապահովագրութիւն.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՓՈԽԱԿԱՆ

Ձիով, գետիով և ցամաքային ճանապարհներով. ապահովագրութիւն ջրվեժների և նաւերի.

Ապահովագրութեան համար յայտագրութիւններ ընդունվում են և ամէն տեսակ տեղեկութիւններ և բացատրութիւններ տպագրվում են ընկերութեան գլխաւոր գործակալ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԻՑԻՆ ՍԵՐԳԵՅԻՆ գրասենեակում. Նոեանների տպագրական փակ, տան իչխ. Ձիգիանովի. № 2.

ԼՈՑՍ ՏԵՍԱԼ ԵՒ ՎԱՃԱՌՔՈՒՄ Է

„ՆՈՐ-ՓՈՐԶ“

ԳՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՐԱԿՈՒՄՆ ՀԱՆԴԻՍԻ

ԵՔ ՔԱՋԱՔ ԳԻՔՔԵՔ

ՀԵՏԵՒԵԼ ԹՈՒՂԹՆԵՐԸ

1) Ճառաբանի փոխարէն. 2) Ս. Ղազնչան Ճար չկայ (ուսուցչի յիշատակարանից). 3) Ծովհաննէս Շահնազարեան Մանկ զոհը (կանաչ Ֆ. Հուրաքի գրատարեքում). 4) Ե. Լազարեանց Հուսպիր (վկաին Փ. Նորսեանից). 5) Ծովհ. Կնունի Ինչ է կանչել իւր ազգին Ս. Գալչինեան. 6) Արտաշես Մարդ մէկ անասուն Մարսել Պրէվոյի «Lettres de femmes» բ). 7) Օրիորդ Կատարինէ Ներսիսեանց, Խոյեցիք (վկային Մարսել Պրէվօ-ից. 8) Մ. Գրիգորեան Մի ուշադիրին գեղարուեստական կրքոտիկի մէջ (Ռ. Իսկանդից). 9) Մեզիք Իվ Տուրգենեվի Նրանի բանաստեղծութիւնները ից. Ե. Զաքարեանի Յարգանքի նշանակութեամբ. Խմբագրութեան կողմից. Ծաւտարարութիւններ.

Բարաքանիցը օրինակի գինն է ամենայն տեղ—75 կոպէկ։

Հասցէն՝ Москва, Больш. Дмитровка, д. Живаго, квар. № 2, Ивану Шахъ-Назарянъ.

(5—3) ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Дозволено цензурою, Тифлисъ 23-го Октября 1897 года.

Տպարան Մնացականի Մարտիրոսեանցի.

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.